ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/125

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 13.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն 13.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև ընկերություն) 15.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև պատվիրատու) կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման նպատակով ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն (1-ին, 2-րդ, 4-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ) և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն (1-ին, 3-րդ, 4-րդ) ծածկագրերով էլեկտրոնային մրցույթներում նշված չափաբաժիններով ներկայացրել է ամենացածր գներ: Սակայն պատվիրատուից 10.12.2018թ. ստացված գրությամբ պարզվել է, որ պատվիրատուի կողմից հարցում է կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, եկամուտների գծով ժամկետանց

պարտավորությունների վերաբերյալ և պարզվել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 81.500 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել է:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 10.12.2018թ. թիվ 5 արձանագրությունների թիվ 1 որոշման մեջ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ բացառությամբ սույնօրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերանզանցող ժամկետանց պարտավորություններ:

2018թ. հունիսի 11-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն կոմիտեի խնդիրներն են՝ պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը: Համաձայն հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են հետևյալ հարկատեսակները՝

1) Պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. Ավելացված արժեքի հարկը, ԱԱՀ

բ. Ակցիզային հարկը

գ. Շահութահարկը

դ. Եկամտային հարկը

ե. Բնապահպանական հարկը

զ. Ճանապարհային հարկը

է. Շրջանառության հարկը

ը. Արտոնագրային հարկը

2) Տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. Անշարժ գույքի հարկը

բ. Փոխադրամիջոցների հարկը

2-րդ մասով սահմանված է, որ ՀՀ-ում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույնհոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ ՀՀ-ում կիրառվում են.

1) Պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. Պետական տուրք

բ. Բնօգտագործման վճարը

գ. Սոցիալական վճարը

դ. Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը

ե. Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը

զ. Կենսաթոշակային վճարը

2) Տեղական վճարներ որոնց տեսակներն են՝

ա. Տեղական տուրքը

բ. Տեղական վճարը

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այսինքն պարզ է դառնում, որ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ: Այն հիմնավորվում է նաև նրանով, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին թիվ 22-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը: Նշված հրամանի հավելվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք,

բնօգտագործման վճար: Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չեն:

Ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը նույնպես նախատեսված չէ:

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Առաքելյանը, հայտը ներկայացնելուց ստուգել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորությունների բաժնի անձնական հաշվի քաղվածքը, որտեղ արտացոլվել է, որ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանվում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, գնումների մասին ՀՀ օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում: Ինչպես նաև օրենքի 5-րդ հոդվածով հստակ սահմանված են ՀՀ կառավարության կողմից ընդունվող իրավական այլ ակտերը: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 10.12.2018թ.-ին թիվ 5 արձանագրությունների մեջ գնահատող հանձնաժողովների որոշումները հիմնվել են այլ օրենսգրքի հոդվածներով, որոնք նախատեսված չեն գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովների որոշումները չեն համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Նշենք նաև, որ գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով հստակ նախատեսված են գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները:

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար նախագծերի պարաստման ծախսերի գնահատման աշխատանքների կատարման նպատակով ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրերով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովներին պարտավորեցնել դադարեցնել ընկերության հայտը մերժելու մասին որոշումները:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի տնօրեն Արման Առաքելյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 19.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրերովով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով 15.10.2018թ. հայտ է ներկայացրել նաև «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը Մրցույթի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ՝ հայտնել է, որ բավարարում է Մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Պատվիրատուի կողմից 29.10.2018թ. հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը 01.11.2018թ. ստացվել է եզրակացություն, որի համաձայն «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 81.500 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, Մրցույթի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է առաջնորդվելով Օրենքի և Կարգի կետի պահանջներով, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ մրցույթի գնահատման փուլում ստանալով Կոմիտեի եզրակացությունը ժամկետանց պարտավորություններ ունենալու վերաբերյալ, անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից՝ մասնակցի հայտը ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանվում է, որ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում: Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովի որոշումները հիմնվել են այլ օրենսգրքի հոդվածներով, որոնք նախատեսված չեն գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ գնումների, հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բացկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Հետևաբար գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը ուսումնասիրելով, ինչպես նաև այն համադրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված գրությունների հետ, հիմք է ընդունել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և որոշել է մերժել մասնակցի հայտը: Իսկ Ընկերության կողմից բողոքում նշված այն դրույթը, որ գնահատող հանձնաժողովը հիմնվել է այլ օրենսգրքի հոդվածներով, որը տվյալ դեպքում կիրառելի չէ, ամբողջությամբ անհիմն է, քանի որ Օրենքում հստակ նշված է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բացկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից, և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/125 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 13.12.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրերով գնանշման հարցման հրավերները (այսուհետ՝ նաև Հրավեր) ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրերով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.10.2018թ. կայացած նիստի թիվ 4 և 10.12.2018թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից 19.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, 15.10.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.10.2018թ. և 01.11.2018թ. տրված եզրակացությունները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ139+000-142+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ75+500-կմ79+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ107+900-կմ109+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման մետաղական արգելափակոցների տեղադրման 15 կմ երկարությամբ, Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ32+888-33+628 և կմ52+970-կմ53+350 փլուզված հատվածներում գաբիոնային հենապատերի կառուցման, Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ53+400-53+800 հատվածի ասֆալտապատման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ7+000-կմ8+400 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ12+560-կմ13+900 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ21+940-կմ24+700 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ41+900-կմ46+400 հատվածի հիմնանորոգման, Հ-36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ7+500-ում փլուզված հատվածի վերականգման ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման,

ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր համայնքի 5,7 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Մ16-Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր համայնքի 1,65 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Նորաշեն-Զորաթան ճանապարհից դեպի ձեռնոցի գործարան տանող ճանապարհի, ՀՀ կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի կազմել է 530.000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 920.000 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 720.000 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի համար՝ 690.000 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 1.440.000 ՀՀ դրամ, 11-րդ չափաբաժնի համար՝ 2.120.000 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի համար՝ 440.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 15.10.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 10.12.2018թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության.

- 1-ին կետով արձանագրել է, որ 01.11.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե:

- Ստացված հարցումների պարզաբանումների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, Լարիսա Նալբանդյանի Ա/Ձ-ի և «Գլոբալ Ինժիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են թիվ 14602, թիվ 16278 և թիվ 16749

լիցենզիաները, որոնց մեջ որպես լիցենզավորված մասնագետ նշված է միևնույն մասնագետը՝ Սուսաննա Ալբերտի Ղազարյանը, անձնագիր՝ AM0519726:

ՀՀ պետական եկամուտների 07.12.2018թ. թիվ 01/04-1/76831 գրությամբ ներկայացված տեղեկատվության, «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, Լարիսա Նալբանդյանի Ա/Ձ-ի և «Գլոբալ Ինժիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրերի և տեղեկանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բոլոր երեք մասնակիցների լիցենզիաների ներդիրներում նշված անձը միաժամանակ աշխատում է բոլոր մասնակիցների մոտ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 81.500 ՀՀ դրամ գումարի չափով:

- 2-րդ կետով հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ և 45-րդ կետերով որոշել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ126+100-կմ131+500 հատվածի հիմնանորոգման, Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ13+500-կմ22+400 հատվածի հիմնանորոգման, Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգման և Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ 0+000+կմ5+000 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 1.440.000 4-րդ չափաբաժնի համար՝ 1.140.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 15.10.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 10.12.2018թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության.

- 1-ին կետով արձանագրել է, որ 01.11.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.10.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 81.500 ՀՀ դրամ գումարի չափով:

- Ստացված հարցումների պարզաբանումների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, Լարիսա Նալբանդյանի Ա/Ձ-ի և «Գլոբալ Ինժիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են թիվ 14602, թիվ 16278 և թիվ 16749 լիցենզիաները, որոնց մեջ որպես լիցենզավորված մասնագետ նշված է միևնույն մասնագետը՝ Սուսաննա Ալբերտի Ղազարյանը, անձնագիր՝ AM0519726:

ՀՀ պետական եկամուտների 07.12.2018թ. թիվ 01/04-1/76831 գրությամբ ներկայացված տեղեկատվության «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, Լարիսա Նալբանդյանի Ա/Ձ-ի և «Գլոբալ Ինժիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրերի և տեղեկանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բոլոր երեք մասնակիցների լիցենզիաների ներդիրներում նշված անձը միաժամանակ աշխատում է բոլոր մասնակիցների մոտ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 81.500 ՀՀ դրամ գումարի չափով:

- Նույն արձանագրության նույն կետով հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 31.10.2018թ և 01.11.2018թ. եզրակացությունները, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 44-րդ և 45-րդ կետերով Հանձնաժողովը որոշել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն 13.12.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.10.2018թ. և 01.11.2018թ. տրամադրած եզրակացությունների համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.10.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 81.500 ՀՀ դրամ գումարի չափով, մինչդեռ Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն՝ հայտը ներակայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել: Բողոքաբերը հայտնել է նաև, որ Պատվիրատուի կողմից 10.12.2018թ. թիվ 5 արձանագրությունների մեջ գնահատող հանձնաժողովների որոշումները հիմնվել են այլ օրենսգրքի հոդվածներով, որոնք նախատեսված չեն գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ և Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովը նման հիմքերով վերջինիս հայտը մերժելով գործել է ոչ իրավաչափ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 15.10.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի

միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն սույնհրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է՝ օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.10.2018թ. և 01.11.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացությունների համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (15.10.2018թ.)

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 81.500 ՀՀ դրամ:

- «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ինչ վերաբերում է այն փաստին, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները մերժել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նման հիմքով Ընկերության հայտը մերժելով Պնատվիրատուն գործել է ոչ

իրավաչափ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է այն սահմանափակումները, որոնց առկայության պայմաններում անձինք իրավունք չունեն մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար նախագծերի պարաստման ծախսերի գնահատման աշխատանքների կատարման նպատակով ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրերով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովներին ընդունել՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշումներ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ